

ԴՌՆԲԱՅԷՔ

Յատկանշական է, որ Ծաղկագարդի երեկոյեան կը կատարուի Դոնբացէֆի հրաշալի արարողութիւնը, ուրտեղ շեշտը հիմնականին մէջ դրուած է այն մտքին վրայ, որ Աստուած Արքայութեանէն ներս մուտքը վերապահուած է միայն արդարներուն: Անհրաժեշտ է այստեղ մեջբերել Դոնբացէֆի արարողութեան մէջ ներառուած երկխօսութիւնը, որն այնքան ներշնչող է եւ հոգեմորոգող: Այս երկխօսութիւնը մեկնաբանելու անհրաժեշտութիւնը չենք գգար:

Դոնբացէֆի երկխօսութիւնը. Բաց մեզ Տէր գղուոն ողորմութեան, որ ողբալով կարդամ առ իեզ (կ'ըսուի երեք անգամ):


Ներսէն կ'ըսուի. Ո՛վ են աստե՛ք, որ բանամ դուռը, որովհետեւ այս դուռը Տիրոջն է եւ արդարները կը մտնեն անկէ:

Քահանան Դուրսէն կ'ըսէ. Ոչ միայն արդարները կը մտնեն, այլեւ մեղաւորներ՝ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ:

Ներսէն. Որովհետեւ ասիկա դուռն է երկինքի եւ հովիտը տրամութեան. գոր Աստուած Յակոբին ուխտեց. արդարներուն հանգստարան, մեղաւորներուն ֆաւարան, Քրիստոսի արքայական, հրեշտակներու բնակարան, սուրբերու ժողովարան, ապաւնի ֆաղաֆ եւ տուն Աստուծոյ: Ապա կը շարունակուի երկխօսութիւնը մինչեւ ներսէն ըսուի. Արարիչ Աստուծոյ ձայնը կը կոչէ ըսելով. «Եկե՛ք Հօրս օրհնածներ եւ ժառանգեցէ՛ք աշխարհի սկիզբէն ձեզի պատրաստուած արքայութիւնը»:

Քահանան կ'ըսէ. Բացէ՛ք ինծի ողորմութեան դուռը, որպէսզի անկէ մտնեմ եւ Տիրոջ խոստովանիմ: **Ապա Վարագոյրը կը բացուի:**

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՄԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՅՈՒՆ

«Շնորհակալութիւն քեզի, Հա՛յր ամենակալ, որ սուրբ եկեղեցիդ մեզի պատրաստեցիր իբրեւ նաւահանգիստ, սուրբ տաճար մը՝ ուր սուրբ երրորդութիւնդ կը փառաբանուի:

Շնորհակալութիւն քեզի, Քրիստոս Թագաւոր, որ մեզի կեանք պարգեւեցիր սուրբ եւ կենարար Մարմնովդ եւ Արիւնովդ: Զու առատ ողորմութիւնդ եւ քաւութիւնդ շնորհէ մեզի:

Շնորհակալութիւն քեզի, ճշմարիտ Հոգի, որ սուրբ Եկեղեցին նորոգեցիր: Երրորդութեանդ հաւատքով զայն անարա՛տ պահէ այժմէն մինչեւ յաւիտեան»:

Մինչ պատարագիչ քահանան իր լուռ գոհունակութիւնը կը մատուցանէ,...

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍԲԻ ԽՎ ՈՑԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՎ ՇԱԽԻՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԸ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 13 ԱՊՐԻԼ 2025

ԹԻԻ 15

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՏՈՒՄԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Երգ 1.1-2.3: Զք. 9.9-15: Ստթ. 20.29-21.17 **ՇԱՂԿԱԶԱՐԴ**

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ ՄԱՏԹԵՆՍ 20. 29-21.17


Երբ Յիսուս եւ իր աշակերտները Երիքովէն դուրս կ'ելլէին, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրենց: Ճամբու եզերքին նստած երկու կոյրեր, երբ լսեցին, որ Յիսուս կ'անցնի, սկսան աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Յիսուս, Դաւիթի որդի»: Ժողովուրդը սաստեց անոնց, որպէսզի լռեն, բայց անոնք ատելի բարձր ձայնով շարունակեցին աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի որդի»: Յիսուս կանգ առաւ, իր մօտ կանչեց կոյրերը եւ հարցուց. «Ի՞նչ կ'ուզէք, որ ընեն ձեզի»: Անոնք պատասխանեցին. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս գթաց եւ անոնց աչքերուն դպաւ: Կոյրերը անմիջապէս սկսան տեսնել եւ հետեւեցան իրենց:

Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփազէ՝ Չիթենաց լեռան կողմ, Յիսուս իր աշակերտներէն երկուքը որկեց՝ անոնց պատուիրելով. «Գացէ՛ք սա դիմացի գիւղը եւ անմիջապէս հոն կապուած էջ մը պիտի գտնէք իր աւանակին հետ. քակեցէ՛ք եւ ինծի բերէ՛ք: Եթէ մէկը առարկէ, ըսէ՛ք. "Տերը անոնց պէտք ունի", եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի»: Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականանայ մարգարէին խօսքը. «Երուսաղէմի ըսէ՛ք. Ահա քու թագաւորդ քեզի կու գայ. Անիկա հեզ է, նստած իշու մը աւանակին վրայ»: Աշակերտները գացին եւ կատարեցին, ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց: Բերին էջն ու աւանակը եւ իրենց հագուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հագուստները կը փռէին ճամբուն վրայ, ուրիշներ ծառերէն ռստեր կը կտրէին եւ կը տարածէին ճամբուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին, օրհնեալ է ան որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնութի՛ւն Բարձրեալին»:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դրդեցաւ: «Ո՛վ է ասիկա», կը հարցնէին քաղաքի բնակիչները. եւ ամբողջ կը պատասխանէր. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Դաւիթի Նազարէթ քաղաքէն»:

Ապա Յիսուս տաճար մտաւ եւ դուրս վընտեց բոլոր անոնք որոնք տաճարին մէջ առուծախ կ'ընէին. լուծախփոխներուն սեղանները եւ աղանէվաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց. «Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. "Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի", մինչ դուք զայն աւազակներու որջի վերածած էք»: Տաճարին մէջ Յիսուսի մօտեցան կոյրեր եւ կաղեր եւ ան բժշկեց զանոնք: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան Յիսուսի կատարած հրաշքները եւ լսեցին աղաղակը մանուկներուն, որոնք տաճարին մէջ կը գոչէին. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին», բարկացան եւ Յիսուսի ըսին. «Կը լսե՞ս, ինչ կ'ըսեն անոնք»: Յիսուս պատասխանեց. «Այո՛, չէ՞ք կարդացած Սուրբ Գիրքին սա խօսքը, թէ "Մանուկներու եւ կաթնկեր երեխաներու բերնով գովեստ հիստեցիր"»: Ապա Յիսուս ձգեց զանոնք եւ քաղաքէն դուրս ելաւ՝ դէպի Բեթանիա, եւ հոն գիշերեց:

ԾԱՂԿԱԶԱՐԴ



Մեծ պահոց վերջին Կիրակին կը կոչուի Ծաղկագարդ:

Ծաղկագարդը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հանդիսաւոր մուտքն է Նրուսաղէմ:

Երբ Յիսուս աւանակին վրայ նստած մուտք կը գործէ Նրուսաղէմ, ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ անոր, ձիթենիի եւ արմաւենիի նիւղերով կը դիմաւորէ զինք: Անոնք նոյնիսկ իրենց հագուստները կը փոխն գետիկ, որպէսզի Յիսուս անոնց վրայէն անցնի:

Երբ Յիսուս տաճար կը մտնէ, կը տեսնէ որ շուկայի վերածուած է ան, անմիջապէս կը մաքրէ տաճարը ու բռնորին կը հասկցնէ, որ տաճարը միայն աղօթքի համար կը գործածուի:

Ծաղկագարդի Շաբաթ երեկոյեան, ժամերգութեան ընթացքին կը բացուի քառասուն օրեր փակ մնացած խորանը: Ծաղկագարդի օրը Անդաստանի ժամանակ կ'օրհնուին ձիթենիի նիւղերը եւ հաւատացեալները օրհնուած ձիթենիի ոստերը կը տանին տուն:

Յատկանշական է Ծաղկագարդի թափօրը, որուն կը մասնակցին բոլոր մանուկներն ու երեխաները գարդարուն ու գունաւոր մոմերով:

Ի՞նչ է թափօրը:

Ս. Պատարագի սկիզբը, պատարագիչ եկեղեցականը խորան բարձրանալէ ետք վարագոյրը կը գոցուի. վարագոյրին ետին կը պատրաստէ Ս. Պատարագի սկիհը՝ նշխարն ու գինին: Վարագոյրը բացուելով՝ պատարագիչը խորանէն վար կ'իջնէ խաչ ու բուրվառ ձեռքին եւ դպիրներ՝ խումբով առջեւէն շարական երգելով ժողովուրդին մէջ կը դառնան: Այս կը կոչուի թափօր:

Թափօրը կը խորհրդանշէ Յիսուս Քրիստոսի աշխարհ գալը եւ ժողովուրդին մէջ շրջիլն ու քարոզելը:

Երբ պատարագիչը թափօր կը դառնայ, հաւատացեալները պարզ դիտողներ պէտք չէ մնան: Այսօր ընդհանրացած երեսոյթ դարձած է թափօրի ատեն տեսնել հաւատացեալները, որոնք անտարբերութեամբ կը հետեւին եկեղեցւոյ մէջ դարձող պատարագիչին: Անոնք, որոնք մօտ են պատարագիչին, բարեպաշտական մղումէ մեկնած կը մօտենան անոր ձեռքի խաչը համբուրելու, ումանք քաղաքավարութիւն կը գգան խաչը համբուրել, ուրիշներ պատարագիչին հաճելի թուելու համար կը համբուրեն, ուրիշներ կը գգան, թէ պարտաւոր են համբուրելու, եւ ինչքան գգալի կ'ըլլայ խաչը համբուրելու մեքենական շարժումները: Իսկ անոնք որոնք պատարագիչէն հեռու են, ի՞նչ կ'ընեն: Անոնք ըսելիք չունին:

Պատարագիչը երբ ժողովուրդին մէջ թափօր կը դառնայ, հաւատացեալները պէտք է մեղմ ձայնով ըսեն. **«Յիշեցի՞ր եւ գմբզ առաջի անմահ գառինն Աստուծոյ», աշխնմն՝ «Մեզ ալ յիշէ Աստուծոյ գառին (Քրիստոսի) առջեւ:**

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՎԱՏԱԿԱՔԱՐ ԿԸ ԽՕՍԻՆԷ ՅԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ, ԲԱՅՅ ԿԸ ՃԱՆՉՆԱԿՆԷ ՅԻՍՈՒՍԸ

«Անոնց աչքերը այնպէս մը ծածկուած էին, որ չէին ճանչնար վայն» (Ղկ. 24.16): Ահաւասիկ Յիսուսի երկու աշակերտները, որոնք թէեւ կը խօսէին Յիսուսի մասին, եւ թէեւ Յիսուս մօտեցաւ իրենց եւ սկսաւ իրենց հետ քալել, եւ սակայն, անոնք չզգացին անոր ներկայութիւնը եւ չճանչցան վայն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ

Զգո՛յ՛ջ ըլլանք մեր անձերուն: Զըլլա՛յ որ մենք եւս անոնց նման կը խօսինք Յիսուսի մասին եւ սակայն չենք վգար անոր ներկայութիւնը: Զըլլա՛յ որ Յիսուս մեզի կը մօտենայ եւ կ'ընկերակցի մեզի, ինչպէս անոնց մօտեցաւ եւ ընկերակցեցաւ, բայց չենք ճանչնար վինք: Որքա՛ն ցաւալի է տեսնել այնպիսի մարդիկ որոնք կը խօսին Յիսուսի մասին եւ Յիսուսի անունով, եւ սակայն, չեն ճանչնար Յիսուսը եւ չունին անոր ներկայութիւնը իրենց կեանքերուն մէջ:

Աշխատինք մեր բերնին մէջ գտնուող Յիսուսը տանիլ մեր սիրտերուն մէջ:

ԱՆՉԳԱՄԸ

Անվգամը իր հօրը խրատը կ'անարգէ, իսկ ան որ յանդիմանութեան կը հանդուրժէ՝ խոհեմ է: Երբ արդարութիւն տիրէ, ամէն ինչ կը բարգաւաճի, իսկ ամբարիշտները արմատախիլ պիտի ըլլան: Առակ 15

ԵՐԲ ՄԱՀՈՒՂՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՔԵԶ ԵՐԿԻՐՂՈՎ ԿԸ ԼԵՑՆԷ, ԵՒ ԿՈՒԶԷ ԳԻՏՆԱԿ ԹԷ ԱՍՈՒՂԾ ԻՆՊԷԼ ՄԱՀՈՒՂՆԷ ԿԸ ՓՐԿԷ, ԿԱՐԿՎ՝ ՍԱՂՄՈՍ 88

Ո՛վ Տէր, փրկիչ Աստուածս, ցերեկը կ'աղաղակեմ քեզի, գիշերը բուդիմացդ կը հեծեծեմ: Ընդունէ՛ աղօթքս, ակա՛նջ տուր հեծեծանքիս, որովհետեւ չարչարանքներով ողողւեցայ, մահուան դուռը հասայ: Կարծես արդէն մահափոս դրուած ըլլամ, անօգնական մնացեր եմ ամենեւին, մեռելներուն մէջ լքուած. գերեզմանին մէջ պառկող սպաննուած այն մարդոց պէս՝ որ դուն այլեւս չես յիշեր, որոնց այլեւս չես օգներ: Զիս մահափոսին խորը նետեցիր, մահուան խաւար անդունդին մէջ: Գլուխս թափեցիր սրտմտութիւնդ, որ ալիք առ ալիք ծանրացաւ վրաս: Իմ ծանօթներս ինձմէ հեռացուցիր, վիսպժգալի դարձուցիր անոնց աչքին. միմակութեանս մէջ բանտուեցայ, եւ ելք չունիմ: Աչքերս տկարացան տառապանքներէս, օրն ի բուն քեզի՛ կ'աղաղակեմ՝, Տէ՛ր, ձեռքերս բացած՝ քեզի՛ կ'աղօթեմ: Մեռելներուն համար հրաշք կ'ընե՞ս դուն, ստուերները կրնա՞ն ելլել քեզ գոհաբանել: Գերեզմանին մէջ մէկը կը խօսի՞ բուսիրոյդ մասին, հաւատարմութեանդ մասին կը պատմուի՞ կորուստի այդ վայրին մէջ: Հոն՝ խաւարին մէջ՝ հրաշքներդ կը ճանչցուի՞ն, մոռացութեան այդ երկրին մէջ արդար գործերդ կը գիտցուի՞ն:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ